

Դեռ չէ գրեթե առաջ դու ըստ միտք արա, Ու՛ր է ինքզինդ գրեթե անհոգը...

Այս տողերը գրվել են 1857 թվին: Եւ ինչ: Այսօր էլ հայ հեղինակը, գրիչը ձեռք առնելուց առաջ, այն սոսկալի հարցն է տալիս իրան, ով պիտի կարգայ, ինչ միջոցով պիտի ինքը տյա հանէ իր աշխատութիւնը... Մենք, ճիշդ է, միայն գրական նախատարներ կարող ենք ունենալ:

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Հոկտեմբերի 28-ին

Երեկ հեռագիրը կայծակի արագութեամբ լուր տարածեց քաղաքում, որ Մազրա կայարանի մօտ երկաթուղու գնացքը խորակվել է: Անմիջապէս նախագահեց, քաղաքային եւ գաւառային բժիշկները, նոյնպէս եւ շատ ուրիշ պաշտօնեաներ շտապեցին աղէտի վայրը. գնացողներ շատ եղան եւ քաղաքացիներէ, որոնք մարդու սպասում էին, իսկ կարա կայարանի մօտ շտապեցին տեղական զինուորական բժիշկները, ամբողջ մի սանիտարական բոսայի հետ միասին, վերաբերվածներին անմիջապէս հիւանդանոց տեղափոխելու համար:

Մազրա կայարանից առաջին եկող հեռագիրը շատ վատ բան էր գուշակել տալիս, որպէս թէ բոլոր վագոնները փչւրվել են, գծից դուրս են թռել եւ այլն: Իրարանցումը կատարեալ էր: Ժողովրդի մէջ մարդկային զոհերը տանակներով էին հաշուել, հեռագիրներ էր, որ տեղում էին հեռագրատանը. բարեկամները իրար առողջութիւն էին հարցնում: Երեկոյեան ժամը 4-ին հազիւ պաշտօնական հեռագիրը մարդկանց մտքերը հանգստացրեց, հաղորդելով իսկական եղելութիւնը, որ հետեւեալն է.

Թիֆլիսից կարա եկող գնացքը, Մազրա կայարանը դեռ չէր հասած՝ գծից դուրս է թռչել մի շարք վագոններ, ինչպէս զոհերը կայարանում լինելու պատճառով. մեքենայաւոր մեծ հատուկեամբ կարողանում է այնպէս անել, որ մարդկային զոհեր չեն լինում. մեքենան ցցվում է հողի մէջ, իսկ ինքը, մեքենայաւորը, թռչում ազատութեւն է: Բոլորովին փչւրվում է բազմաթիւ վագոնը, իսկ պատի եւ միւս վագոնները ուժեղ ցնցումներ են ստանում եւ մի քանի քիթ ու պոռնոց քերծում. մի քիթ վատ վերաւորվում է մի կոնքուկտոր եւ մի երկու թեթիւ վերքեր ստանում մի ուրիշ երկաթուղային ծառայող:

Անմիջապէս, նախագահելու ներկայութեամբ կազմվում է արձանագրութիւն եւ ժամի 5-ին կարգից գնացած գնացքը վերադարձաւ քաղաք, բերելով բոլոր ճանապարհորդներին: Վերաբերվածներին տարան հիւանդանոց:

Իրագործման առաջին փորձերը եղան Յարան-սիայում 1842 թվին. բայց նա ցանկալի արդիւնքներ ունեցաւ միայն 70-կան թուականների վերջին: Յարանսիայից օրինակին հետեւեցին ամերիկացիները, ապա Անգլիան, Գերմանիան, Շվեյցարիան, Հոլանդիան, Ռուսաստանը, Բելգիան եւ Սպանիան: Եւ այսօր Յարանսիայում, ինչպէս մեզ ցոյց են տալիս II բաժանմունքի զօկուսականները, գոյութիւն ունեն 120 գործարան եւ հիմնարկութիւններ, ուր օգտի մի որոշ տոկոսը յատկացվում է բանւորներին:

Օգտի որ տոկոսն է աշխատանքին արվում: Տոկոսը մեծ մասամբ լինում է որոշ, նախօրոք որոշած. կայ եւ անորոշ տոկոս, ինչպէս օրինակ, Պարիզի Bon marché յայտնի մագազինը եւ այլն: Որոշ տոկոսը շատ դանդաղ է. գործարան կայ, որ տալիս է 0,30%—1000-ից 3, մի քանիսը՝ 5%—100-ից 5, ոմանք՝ 7 1/2, 10%—15%-ը, ինչպէս այդ տեղի է ունենում Հոլանդիայի Վան Մարկինի գործարանում, Պարիզի Կէյլերի գործարանում եւ այլն. 33%, Բայ-Լըմենի հեռագրատակների գործարանում, նոյն իսկ 50%, յիսուն տոկոս՝ Յարանսիայում, յայտնի Լեօկլէրի գործարանը, որ 1842 թվին այդ սկզբունքի առաջին իրագործողն եղաւ: Լարոշ-Ժուրբերի թղթի գործարանը մայր գուժմարի համար վերցնում է զուտ օգտի միմիայն 25%, 25%՝ գործարանի աշխատակցային, իսկ մնացած 50%-ը՝ բանւորներին:

Ինչպէս է բաժանվում բանւորներին յատկացված օգտի մասը: Գլխաւորապէս նրանց ստացած օրավարձի համեմատ. մի քանի տեղ ըստ նրանց ծառայութեան տարիների թիւին կամ ըստ իրանց արժանաւորութեան եւ պաշտօնի նշանակութեան, մի քանի գործարաններ էլ անխորի կերպով հաւասար են բաժանում:

Կօօպերատիվ ընկերութիւնները կօօպերատիվ ընկերութիւնները բաժանվում են երկու տեսակի՝ նայած իրանց կազմու-

ճանապարհորդները, ինչպէս պատմում են, ազատվելիս չորհրդակալական ցոյցեր են արել մեքենայաւորին, նրա անվաններովեան համար, որի չորհուրէ իրանց կեանքերը փրկվել են. մինչեւ իսկ, խօսում են, թէ հանգանակութիւն են արել մի ընծայ մատուցանելու մեքենայաւորին: Ե. Համաձայն

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, հոկտեմբերի 27-ին

Թոյլ տուէք, ինչպէս եմ, «Մշակի» մէջ արձանագրել մի տղի փառս:

Ինչպէս յայտնի է, Աւստրիան փողոցի վրա գտնվող Թիֆլիսի ժողովրդական ընթերցանութեան դահլիճում յաճախակի արվում են համարեա ձրի ներկայացումներ ժողովրդի համար: Որոշված էր կիրակի օր, հոկտեմբերի 29-ին, խաղալ հայերէն լեզուով Օտարովսկու «Անմեղ Մեղաւորներ» պիեսը, մասնակցութեամբ դերասանների եւ սիրողների: Երկուշաբթի օրից արդէն դերերը բաժանված էին եւ շարունակ ամեն երեկոյ կրկնութիւններ էին լինում: Յանկարծ, հինգշաբթի երեկոյեան, երբ հաւաքված սպասում էինք միւսերի գալու, որ սկսենք կրկնութիւնը, ներս մտաւ մասնակցողներից մէկը եւ յայտնեց, որ դերասաններից մէկը (այժմ անուանական բանկում ծառայող) պ. Մ., գլխաւոր դերակատարներին պ. Մ., հրաժարվում է խաղալու, պատճառ բերելով թէ՛ տոնակալի հրաւիրված է մի տեղ ճաշի, իչ կարող մասնակցել, աւելացնելով նաեւ, որ խնդրել էր կողմից մասնակցողներին չը նկատել իրանց: Պէտք է ասել, որ պ. Մ. եղել էր մէկ անգամ կրկնութեանը եւ ոչ մի խօսք անգամ չէր ասել հրաժարվելու մասին: Ժամանակը անցած լինելով եւ չը դանկտով այլ եւս մէկը, որ կարողանար յայնմ ամեն մի այդպիսի պատասխանատու դեր, ստիպված եղանք ներկայացումը չը տալ:

Ահա այս է իրողութիւնը: Փաստը ինքն ըստ ինքան շատ տեղի է եւ միանգամայն պարտաւորելով: Նախկին դերասան պ. Մ. համար միթէ՛ աւելի դերադասելի են հրաւերները, ճաշկերթիները, քան բնուր, քան թէ ժողովրդական ձրի ներկայացումները... զոհն է ամենահասարակ քաղաքավարութիւնը պահանջում էր չը դրվել առաջ տուած խօսքը, եթէ չէր ցանկանում, սկզբից հրաժարվել, ինչպէս միւսերի աշխատանքը եւ պատճառ չը դառնար գործի խանգարում:

Ա. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆԻ

Կիրակի, հոկտեմբերի 29-ին, նախագահական զատարանի չէնքում կայացաւ Թիֆլիսի երկուսեւ հաւատարմատարների ժողով մի հարցի առիթով, որ մեծ նշանակութիւն ունի ոչ միայն երկուսեւ հաւատարմատարների պատիւ համար, այլ եւ ամբողջ հասարակութեան շա-

թեանը—վարպետների եւ բանւորների. կայ եւ մի երրորդ ձեւ՝ խառն, այսինքն վարպետների եւ գործաւորների միասին: Վարպետների կօօպերացիաների նպատակը զուտ շահն է, անչափ չափ. կարելիին չափ էժան գնով գործել տալ իրանց բանւորներին եւ կարելիին չափ թանց գնով ծախել նրանց արտադրած ապրանքը:

Այլ բան են բանւորական կօօպերատիվ ընկերութիւնները. այստեղ ոչ թէ նիւթական շահն է իշխող դեր խաղում, այլ մի ամբողջ դասակարգի ունակութիւն եղող սկզբնական, ամեն նախադրական իրաւունքների, յաճախ նրա լինել չը լինելու: Բայց պաշտպանութիւնն է այդ ընկերութիւնների բուն նպատակը, այլն ու բնուր: Կար ժամանակ, որ Յարանսիայում օրէնքով արգելված էր այդ ընկերութիւնների հաստատութիւնը եւ գոյութիւնը. բանւորներին արգելված է, ինչպէս նորերս ստեւտրի մի նիւտոն էր ասում—cette communauté même de la souffrance. 1867 թվին, Նապոլէոն III-ի օրով, այդ բացառիկ օրէնքը վերացաւ. ապա երրորդ հանրապետութեան չորհուրէ այդ սինգիկաները նոր ոյժ, նոր եռանդ ստացած տարածվեցին ամենուրեք եւ այսօր Ֆրանսիական կառավարութիւնը ոչ միայն արգելում է, ընդհանրապէս նրա միջնորդներից մէկը վերջերս գիմելով բանւորներին՝ հրաւիրում է կազմակերպվել, սինգիկաներ կազմել...

Ինչպէս են ներկայացնում այդ ընկերութիւնները, բնէ է նրանց նպատակը, նրանց կազմակերպութիւնը: Այս հարցերին պատասխանելու մենք աչքի առաջ կունենանք անգլիական կօօպերացիաները, որոնք աւելի տիպիկ, այսպէս ասած, աւելի կրասիկ են: Մինչ ֆրանսիական կօրպերատիվ սինգիկաները յաճախ տարբեր տարբեր նպատակ եւ տարբեր կազմակերպութիւն ունեն, —անգլիականը ունի մի որոշ, միանգամայն սահմանված նպատակ, մի որոշ, ամենուրեք միանման եւ զօրեղ կազմակերպու-

նեւի տեսակետից: Այդ ժողովի գումարման առիթն էր այն երեւոյթը, որ երկուսեւ հաւատարմատարներից եւ նրանց օգնականներից չաւորը յատուկ գործակալներ են պահում, որոնք գործատէրեր (կիլինտներ) ճարելու համար դիմում են ամեն տեսակ միջոցներ, որով վնաս են հասցնում գործատէրերին եւ վայր գցում երկուսեւ հաւատարմատարների պատիւը: Ժողովը միաձայն եկաւ այն եղբակացութեան, որ պէտք է վերացնել այդ անպատաւներ երեւոյթը եւ նրա դէմ կռուել: Միջոցների ծրագիր կազմելու համար ընտրեց մի յանձնաժողով, որ պէտք է իր ծրագիրը ներկայացնէ ընդհանուր ժողովին ոչ ուշ քան 1 1/2 ամիս յետոյ:

Կովկասեան ցուցահանդէսի համար այժմ, ինչպէս լսում ենք, մտադրութիւն կայ յարմարեցնել Թիֆլիսի ազգեգործական դպրոցի հողը, որ մօտ վեց դեկտամետր տեղ տարածութիւն ունի: Այդտեղ կան եւ մի քանի պատրաստ չինութիւններ, որոնք կարող են ծառայել ցուցահանդէսի համար: Եթէ կարելի լինէր միացնել եւ չեւրոպայական կայարանի չինութիւնը, այն ժամանակ հարցը կարող էր լուծվել ամենաբարձր կերպով:

Կիրակի, հոկտեմբերի 29-ին, Գ. Աղեխանեանի կաշուէ եւ թաղիքի գործարանը տօնեց իր գործունէութեան քսանհինգամեայ յօրեկանը: Գործարանի բազմաթիւ բաժանմունքները զարգարված էին դրօշակներով: Գործարանի հիմնադիր եւ նրա գլխաւոր ղեկավար Գ. Աղեխանեան, կանգնած գործարանի դրան մօտ՝ ընդունում էր հիւրերին, որոնց առաջնորդում էին դէպի արհեստանոցի դահլիճը, ուր ժամի 12-ին սկսվեց մաղթանքը: Դահլիճը փոխված էր գործարանի եւ զարգարված դրօշակներով մի գործարանի արդիւնագործական պատասխանով: Մուտքի դիմաց դրված էր սեղան, վրան պատկեր, մի կողմը—վնասել յօրեկանի պատկերով, ստացած մեղաների նկարված օրինակներով եւ ընծաներ, միւս կողմը կանգնած էր պալատի երեքինի խոմբը, իսկ սեղանի մօտ ուղղափառ եւ հայ հողեւորականութիւնը: Այնտեղ էր Առեւտրական ուսումնարանի աշակերտների մի փոքր խումբ՝ դպրոցի վարչութեան հետ: Վնասելի տակ կարգով տեղ էին ընծաւ գործարանի վարչութեան անդամները: Հանդէսին ներկայ էին Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչ, տիկիններ, օրիորդներ, նախագահեա Սվեչին, գեներալներ Ասիլաւաւարի, Ամիրալի, Թիֆլիսի քաղաքապետը, մասով Ներկայացուցիչները, աստիճանաորներ եւ բազմաթիւ հիւրեր: Ուղղափառ քահանայ Տղեմաթաճէ ամբիւս բարձրացաւ եւ թիւն:

Կօօպերատիվ ընկերութիւնների նպատակն է՝ բարեօրէյ բանւոր դասակարգի սօցիալական եւ արդիւնաբերական դրութիւնը: Կօրպերատիվ շարժումը Անգլիայում գլխաւորապէս երկու ձեւ է ստացել. 1) սպառման ընկերութիւն (Association de consommation) եւ արտադրութեան ընկերութիւն (Association de production): Այդ երկու տեսակ ընկերութիւնների անդամները բաղկացած են բանւորներից:

Սպառման կօրպերացիաները սովորական գնելով մատակարարում են իրանց անդամներին այն ամենը, ինչ որ անհրաժեշտ է ընտանիքի բոլոր պէտքերին: Այդ ձեւնարկութեան զուտ օգտի մի մասը կօրպերացիաները յատկացնում են դպրոցական եւ բարեգործական հիմնարկութիւններին. մնացածը բաժանվում է նրա անդամների մէջ՝ համեմատ նրանց գնած ապրանքների արժողութեան:

Կօրպերատիվ ընկերութիւն հիմնելու համար, ըստ անգլիական օրէնքների, անհրաժեշտ են առնուազը եօթն անձինք, որոնք միասնալով կազմում են ասիլալական եւ իրաւաբանական մի որոշ հիմնարկութիւն: Իւրաքանչիւր ընկերութիւն իր անդամներից ընտրում է մի կօմիտէ, որը լինում է նրա ներկայացուցիչը եւ նրա գործողի մարմինը: Երեք կամ վեց անհատ մի անգամ տեղի են ունենում ընդհանուր ժողովներ:

Անցանկներում սպասման ընկերութիւնները իրանց ապրանքները գնում էին գործարանատէրերից կամ մեծ մագազիններից: Դա ներկայացնում էր մեծ անդամարկութիւններ. հարկաւոր էր ունենալ սեփական gros մագազիններ, ինչպէս անգլիացիներ են ասում՝ wholesales կամ ուղղակի սեփական գործարաններ: Մի այդպիսի խոշոր մագազին կօրպերատիվ ընկերութիւնները հիմնեցին 1863 թվին Անգլիայի համար, մի երկրորդը 1868-ին՝ Շոտլանդիայի համար: Այդ մագազինները ապրանք են

ողջունեց տօնը մի կարճ եւ ազդու ճառով, որի բնաբանն էր «Ժամանակը, եթէ լաւ գործադրվի, ոսկի է», ապացոյց բռնելով յօրեկանի իր ժամանակը հետաքրքրող գործարանի սպանաւորով՝ քսանհինգ տարվայ ընթացքում ոչինչից առաջին գործ առաջացնելը: Յետոյ կատարվեց մաղթանք, որի ժամանակ երգում էր խումբը քառաձայն: Մաղթանքից յետոյ ակցիօնեական վարչութեան անդամ Յ. Աղիսանեան, մատուցանելով բանւորների կողմից մի մեծ եւ թանկագին ալրոս ընծայ, չորհուրեց յօրեկանի քսանհինգամեակը: Վարչութեան քարտուղար Յ. Յովհաննիսեան ծանօթացրեց հասարակութիւնը գործարանի անցեալ պատմութեան եւ ներկայ գործունէութեան հետ: Այդ զեկուցումից ետեւ, որ գործարանը բացվել է 1875 թվին միայն կաշուեգործական բաժանմունքով, համեստ կերպով, ունենալով միայն 30 բանւոր. ապա կամայ կամայ ընդարձակելով իր գործունէութիւնը՝ բացել է թաղիքի, եւսինյի եւ կաշուեգործական զանազան իրերի պատրաստութեան բաժանմունքներ: Գործարանի արդիւնքները այժմ վաճառվում են ոչ միայն կովկասում, այլ եւ Ռուսաստանի հեռաւոր տեղերում եւ նոյն իսկ Սիբիրում: Կովկասեան զինւորական վարչութիւնը իր բոլոր պատուէրները տալիս է այդ գործարանին: Տարեկան գործարանը արդիւնաբերում է 100,000 հատ մշակած կաշի, մէկ միլիօն ռուբլի արժողութեամբ, թաղիքային նիւթեր 130,000 արշին՝ կէս միլիօն ռուբլի արժողութեամբ, ոտնամաններ 400,000 զոյգ՝ 390,000 ռուբլու արժողութեամբ, ուրիշ նիւթեր, 210,000 ռուբլու, ընդամենը տարեկան մօտ երկու միլիօն ռուբլի արժողութեան ապրանք: Այնուհետեւ ուղերձներ կարգացրին Թիֆլիսի վաճառականութեան կողմից Յ. Շաղինեան, Թիֆլիսի փոխադարձ կրեդիտային ընկերութեան կողմից Ա. Յովհաննիսեան, Թիֆլիսի առեւտրական դպրոցի կողմից նրա գերեկտօր Մ. Ֆիշեր, «Նաղեժդա» ընկերութեան կողմից Մ. Սուխանեան, իւղագործական եւ սպանագործական միացեալ ընկերութեան կողմից Յ. Թալիբեան: Ստացված էին բազմաթիւ հեռագիրներ, որոնցից կարգացվեցին մի քանիսը: Հանդէսից յետոյ հիւրերը հրաւիրվեցին նախաճաշի: Գործարանի աշխատողների համար պատրաստված էր սեղան թաղիքի գործարանի բազմաթիւ դահլիճներում: Նախաճաշի միջոցին ճառեր խօսեցին նախագահեա Սվեչին, ինտենդանտի գլխաւոր Տարանովսկի, կազմօնայա պալատի կառավարիչ Վերետնիկով, հողային կրեդիտային ընկերութեան կառավարիչ Կորգանով, Յ. Թալիբեան եւ Պալսոմով: Այդ ճառերի մէջ յայտնվեց այն միտքը, որ Աղեխ-

հայթայթվում միմիայն կօրպերացիաներին, որոնց անմիջական կօնտրօլի տակ են նրանք զբաղվում: Նրանք բազմաթիւ ղեկօներ ունեն հաստատած Միացեալ-Նախադիւնքում, կանաչայում, Աւստրալիայում, Յարանսիայում, Գերմանիայում, եւ այլն՝ ապրանք գնելու եւ ուղարկելու դեպքեր. յատուկ գործակալներ են ուղարկում զանազան երկրներ, որպէս զի սրանց արդիւնաբերողներին անմիջա կան յարաբերութեան մէջ դնեն կօրպերատիվ-սպառողներին հետ առանց զանազան սպեկուլանտորների միջամտութեան: Այդ wholesalers մագազինները մի ուրիշ առաւելութիւն են ունեն՝ այն է, որ նրանք միջոց են տալիս ծնունդ առնող, նոր սկզբնական կօրպերատիվ ընկերութիւններին առանց մեծ դժուարութիւնների կազմակերպվել եւ հաստատվել:

Առաջ ենք բերում մի քանի թիւեր ցոյց տալու համար՝ թէ ինչ ահագին ծաւալ եւ զարգացում են ստացել Անգլիայում կօրպերատիվ ընկերութիւնները: 1898 թվականին Անգլիայում եւ Շոտլանդիայում գոյութիւն ունէին 1640 սպառման կօրպերացիաներ, որոնց անդամներ թիւը՝ 1,646,078. ակցիօնեական անձնեանսիւնի՝ 31 միլիօն. նոյն թվականին նրանց վաճառքը եղել է 1,636,521,775 ֆրանկ: զուտ օգուտ 180 միլիօն: Այդ օգուտը 1,334,275 ֆրանկ յատկացրել են կրթութեան գործին: 825,550 ֆրանկ բարեգործութեան: Կօրպերացիաների գլխաւոր հոգսերից մէկն էլ եղել է էժանագին եւ առողջապահական պայմաններին ոչ հակասող բնակարաններ կառուցանելու խնդիրը. այդ նպատակով մինչեւ այժմ ծախված է 125 միլիօն: Այդպիսով կօրպերատիվ ընկերութիւններն ունեն 24,038 բնակարաններ, որոնք շատ չափաւոր գներով վարձով են տրվում կօրպերացիաների անդամներին:

Ս. Շիսեանյ

խանութի գործունէութիւնը կազմակերպեց արդիւնաւորութեան մի նոր ճիւղ մեր երկրում, պատրաստելով լաւ յատկութեան ապրանքներ թէ՛ զինուորական վարչութեան և թէ՛ քաղաքացիական համար, բացեց աշխատանքի նոր ասպարէզ բանոր դասակարգի համար եւ զարկ տուեց գործարանական արդիւնաւորութեան մեր երկրում:

Մոսկովայի Լազարեան ձեռարանը, ինչպէս հաղորդում է «Русск. Вѣд.» լրագիրը, ստորագրութեան բանալով ձեռարանի ուսուցիչները եւ ծառայողները չըջանում հանգուցեալ դիրեկտոր Գ. Քանանսեանի անուն ստիպելով դա հաստատելու համար, մանկավարժական խորհրդի որոշմամբ վճանց հիմնել ձեռարանում ստիպելով տեղ ունէլ մեզալ հանգուցեալի անուն, որ պէտք է արվի մասնագիտական դասարանների ուսանողներին ուսակաւ Արեւելքին վերաբերեալ գրութեան համար: Ստորագրութեան գումարը ներկայումս հասնում է 600 ռուբլու: ձեռարանը արդ գումարը անբաւարար է համարում եւ յոյս ունի, որ դա կարճ ժամանակում կը կրկնապատկի եւ այն ժամանակ միայն հարաւոր կը լինի այդ գումարի տակոսով մեզալ տալ:

Հոկտեմբերի 24-ին, ինչպէս հաղորդում է «Русскія Вѣдомости» լրագիրը, — կայացաւ Մոսկովայի Լազարեան ձեռարանի տարեկան ակումբի ձեռնարանի դիրեկտոր պրոֆեսոր Վ. Միլլեր կարգաց ձեռարանի գործունէութեան տարեկան հաշիւը անցնալ 1899—1900 ակադեմիական տարւոյ համար: ձեռարանում ուսումնական ընթացքը աւարտեցին 22 աշակերտ, որոնցից երկուսը պարգևատրվեցին ոսկէ մեդալով: Ներկայ ակադեմիական տարին ձեռարանի գիմնագիտական բաժնում կային 302 երթեւեկ աշակերտներ եւ 166 որդեգիրներ: Մասնագիտական դասարաններում կային 55 ուսանողներ, որոնցից 6-ը թողալ էին ստանդարտ, իսկ մի քանիսները ազատված էին վճարել կամ նպաստ էին ստանում: Միլլերի ճանից յետոյ դոցէնտի պաշտօնակատար Ա. իսխանով կարգաց հաշիւ մասնագիտական դասարանների մասին, որից երևում է, որ նրանց մէջ այժմ հաշուում են 55 հոգի եւ մայրիկն աւարտեցին իրանց ուսման ընթացքը 9 ուսանողներ: Մասնագիտական դասարանների խորհուրդը ներկայ տարին Գ. Քանանսեանի անուն 400 ռ. մրցանակը տուեց պ. Հայկունուն, հաւանութիւն տուեց եւ ներկայացրեց իշխանութեան հանցողութեանը մի գրութիւն, որ կազմել էր դիրեկտոր պ. Վ. Միլլերի կողմից: Եւ իսխանովի աշխատակցութեանը, որով առաջարկվում է կազմակերպել ձեռարանին կից կովկասեան բաժանմունք պարսկերէն, հայ, վրաց եւ ազգերէջանան լեզուներով գիտնական գործիչներ պատրաստելու համար կովկասագիտութեանը եւ գործնական գործիչներ կովկասեան եւ նրան հարեւան երկրներում Ապա մանկավարժական խորհրդի քարտուղարը կարգաց պարգեւներին արժանացած աշակերտների ցուցակը: Պարգեւներ բաժանելուց յետոյ աշակերտների երգեցիկ խումբը եւ օրկեստրը կատարեցին երաժշտական մի քանի կտորներ: Ակումբ վերջացաւ ազգային հիմունք:

Ներքին գործերի մինիստրութիւնը թոյլ է տուել Թիֆլիսի բնակիչ Ի. Բաւաթովին հրատարակել Թիֆլիսում իր խմբագրութեամբ մի վրացերէն ամսագիր, որ կոչվում է «Մօզ-գաութի» (ճանապարհորդ): Նոյն մինիստրութիւնը թոյլ է տուել Թիֆլիսի քաղաքացի Նիկոլայ Չիգիւնովին հրատարակել Թիֆլիսում իր խմբագրութեամբ մի ամենօրեայ լրագիր ուսուցիչ լեզուով: Լրագիրը կիշվելու է «Теле-фонъ», նա կազմված կը լինի միայն երկու բաժնից՝ Ռուսաց գործակալութեան հեռագիրներից եւ յայտարարութիւններից: Լրագրի տարեկան գինը 2 ռ. է:

Եկող տարւոյ մայիս ամսի վերջերին, «Русск. Вѣд.» լրագրի խօսքով, Պետերբուրգից ճանապարհ կըննին մի արշաւախումբ, բաղկացած լի ճանապարհներից, որը կը զբարկի պատմական յիշատակարանների մանրամասն ուսումնասիրութեամբ իշխանութեան եւ այսպէս աշխուժանալու հիմնական նպատակով:

Եկող տարին մտադրութիւն կայ կազմել կովկասում առաջին չըջանալի էսանդրաֆիական ցուցահանդէս:

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը ներկայ եւ եկող տարին մտադրութիւն ունի չը թոյլ տալ այնպիսի նոր երկաթ թուղիական գծեր անցկացնելու համար կատարվող աշխատանքներ, որոնք տնտեսական մեծ նշանակութիւն չունեն:

Դեկտեմբերի 7-ին հրաւիրվում է երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութեան մէջ գիւղատնտեսական խորհրդի վեցերորդ նստաշրջանը, որ պէտք է քննէ այն հարցերը, որոնք ժամանակի պոլիթեան պատճառով, անցնալ տարւոյ նստաշրջանում մնացել են առանց քննութեան: Այդ հարցերը վերաբերում են գլխաւորապէս աշխուժեցնող արդիւնք ցոյց տուող գիւղատնտեսներին պարգեւատրելու եւ գիւղատնտեսական ցուցահանդէսների կազմակերպելու գործին:

«Нов. Обозрѣніе» լրագրին հաղորդում են Բաղուից, որ Փիթոբլ եւ ընկ. առեւտրական տան պատկանող նաւթ գողանալու համար զոտվող Լուսնիկայի, Սալայի եւ Ագաֆոնով մեղաւոր են ճանաչված նաւթ գողանալու, Սարգիս Մնացականեան գողութիւնը ծածկելու: Քաղաքացիական պահանջը հիմնաւոր է ճանաչված 30,000 ռ. գումարի չափով:

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 25-ին վախճանվեց երկրասարդ հասակում բժիշկ Կլէյնգաւ, ազգով գերմանացի, Հանգուցեալը չը նայելով այն շատ կարճ ժամանակամիջոցին, որ գտնվում էր այստեղ, ընդհանուրի ուշադրութեան էր արժանացել. նա որպէս բժիշկ, շատ հմուտ եւ բարեխիղճ կերպով էր կատարում իր պաշտօնը եւ շատ հեշտերում բոլորովին ճիշտ բժշկում էր հիւանդներին: Նրա մահը մի շատ զգալի կորուստ է այստեղի խեղճ ու աղքատ դասակարգի համար»:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Բիկացաւ հիւանդութիւնը վերջերս տարածվել էր Ղուբալում մանուկների մէջ: Հայ մանուկներից մի քանի գոհեր եղան: Բարեբաղդաբար հիմա այդ հիւանդութիւնը թուլանում է: Երէկ, հոկտեմբերի 25-ին, եկաւ մեզանում առաջին ձիւնը»:

ԱՂԵԱՅԻՑ մեզ գրում են. «Այստեղ եկաւ Թիֆլիսի քաղաքային կրեդիտային ընկերութեան դիրեկտորի պաշտօնակատար պ. Թադէոսեան, որը ժողովելով քաղաքացիներին քաղաքային վարչութեան չինութեան մէջ՝ առաջարկեց նրանց բանալ Թիֆլիսի քաղաքային կրեդիտային ընկերութեան ճիւղը Սոխախում: Սրա համար պ. Թադէոսեան պահանջեց, որ հրդեհից ապահովացրած անշարժ կայքերի գումարը հասնի 150,000 ռ., մինչդեռ ներկայումս քաղաքում ապահովացրած տները հասնում են մոտ 30,000 ռուբլի գումարի: Քաղաքացիները ուրախութեամբ ընդունեցին պ. Թադէոսեանի առաջարկութիւնը եւ խոստացան ապահովանքներ տնները պահանջած գումարի: Միայն պ. Սիմէն Օթարեան ցանկութիւն յայտնեց իր կալուածները ապահովանքի 30,000 ռ.: Վերջը դիրեկտորի պաշտօնակատար յայտնեց, որ կրեդիտային ընկերութիւնը անմիջապէս կը դիմէ ներքին գործերի մինիստրութեան՝ Սոխախում ճիւղ բանալու թոյլտւութիւնը: Անդրեղ Աւելորդ է ասել, թէ որքան բացվել կրեդիտային ընկերութեան ճիւղը կը նպաստէ Սոխախի տնտեսական գրութեան բարեբանութեան: Ձեռնալին ցուրտը շուտով ըսկայելին երկու օր քաղաքում գալիս է ձիւն, բայց հալվում է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Matin» լրագրի թղթակիցը հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում Նիւ-Իօրկից այն գործունէութեան մասին, որ ցոյց էին տալիս Միացեալ-Նահանգների երկու մեծ կուսակցութիւնները—հանրապետականները եւ դեմոկրատները—նախագահական ընտրողական պայքարի ժամանակ: Դեմոկրատների թեկնածու Բրայան Ներսիսիից ուղեւորվեց Չիկագո՝ մերթնի անգամ յարձակումն գործելու այդ կասկածելի քաղաքի վրա, իսկ հանրապետականների ղեկավար Բոզզելիւզ վերջին անգամ չըջում է հակառակ կուսակցութեան պատկառնող չըջանալի, որպէս զի գրաւէ նրանց հանրապետականների կողմը: Բարեբաղդաբար երկու 7,000 հանրապետական խառնուրդ 7,000 ճառ են արտասանում Միացեալ-Նահանգների բոլոր փոքր ի շատէ աշխուժեցնող քաղաքներում եւ գիւղերում: Բայց դրանից,

որովհետեւ ընտրողների մէջ կան անպիտեւէն չիմացողներ, ուստի ճառարանների այս անգամ ընտրող ընդկալած է դերմանալիցներին, իտալացիներին, չիլիացիներին, լեհացիներին, հոլանդացիներին եւ հրէաներին, որոնք իրանց մայրենի լեզուով ճառներ են արտասանում իրանց ցեղակիցների առաջին նպատակ Միւ-Կինթէյի թեկնածութեան հանրապետականների կենտրոնական մասնաժողովը հրատարակել է 125 միլիոն քաղաքային այն բոլոր լեզուներով, որոնք շատ կամ քիչ գործածական են Միացեալ-Նահանգներում: Երկաթուղու առանձին ապրանքատար գնացքներ են վարձվում ուղարկելու համար երկրի զանազան կողմերը աֆիկայի, յայտարարապարհ եւ ծաղրանկարներ, որոնք տարածվում եւ բոլոր շատաներում ահագին քանակութեամբ: Միայն Նիւ-Իօրկում 2,000 ֆրանկ պատի ծախք է լինում օրական: Հանրապետական մասնաժողովն ունի իր առանձին տպարանը եւ վիճագրատներ, որոնք ահա ամբողջ ամիս է, որ օր ու գիշեր աշխատում են: Դեմոկրատներն եւս ընտել են: Նրանք իրանց տնտեսային գործունէութեանը միայնում են նաեւ տպարանիչներ: Նրանց ղեկավարներից մէկը—Կիօլի— յայտնեց, որ ձեթէ ճանապարհական ժամանակ մերկայելի նոյն իսկ ամենաշինքն անկանոնութեան, այն ժամանակ ճանապարհական վրա հեղող պաշտօնականները դուրս կը ձգվեն պատուհաններից: Դեմոկրատների մի ալ ներկայացուցիչ, սենատոր Ջոնս, յայտնեց իր կողմից, որ ձեթէ հակառակ դեմոկրատների ակնկալութեան, ընտրողական ասիորի միջից հանրապետական մեծամասնութիւնը դուրս գալ, ընտրողական ատենանք մօտիկ բաւականաչափ դեմոկրատներ կը գտնվեն անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար, Ինքը Միւ-Կինթէյ անվրդով նստած է Օհայոյի իր ամառանոցում: Նրա կուսակցիցները, ի միջի այլոց, դիմում են ծիծաղալար ժողովներին՝ նրա ընտրութեան արդիւնքները նպատակու համար: Երկաթուղու ղեկավարների մի պատգամաւորութիւն յատուկ գնացքով, 200 վերստ հեռաւորութիւն անցնող տեղից, եկաւ նախագահի մօտ, որպէս զի նուրբէ նրան մի ոսկեմոյլ մեծ պայտ: 1896 թւին եւս նոյն տեսակի նուրբ մատուցեց Միւ-Կինթէյին եւ հիմա հանրապետականները յոյս ունեն, որ պայտը արդիւնքիւն կը բերէ իրանց ընտրիչներին: Յայտնի է, որ պայտը իր ցանկալի հետեւանքն ունեցաւ արդէն:

Բուրալայի համալսարանի նորերս մտան մի քանի ուսանողներ: Ուսանողները չափազանց անբարեխաճ ընդունելութիւն ցոյց տուին իրանց նոր ընկերութիւններին: Որովհետեւ ուսանողների թշնամական ցոյցերը ընդդէմ ուսանողների դեմ չարեանակում են, ուստի, ինչպէս հաղորդում է «Pester Lloyd», ուսանողներին մայրերը վճանել են մանկ համալսարան որպէս ազատ ունեւորներ, որպէս զի կարողանան իրանց աղջկաների հետ այցելել համալսարանի դասախօսութիւնները եւ կարելու դէպքում պաշտպանել նրանց ուսանողների կոպտութիւններից:

Այժմեան իտալական թագուհի Երեմա, որ չընդօգորական իշխան Նիկոլայի աղջկին է, բանտատնորական ձիւղ է ժառանգել իր հօրից եւ արդէն բաւականաչափ յայտնի անուն է ձեռք բերել գրական ասպարէզում: Նրա բանտատնորութիւնները ունեն գեղեցիկ ձեւ, հարուստ գաղափարներ, խորին գզացմունք, թեթեւ ոճ եւ ներդաշնակութիւն: Այդ բանտատնորութիւնները, որոնք գրված են թէ՛ սերբիական եւ թէ՛ իտալական ու ֆրանսիական լեզուներով, մօտ օրերումս պէտք է լոյս ընծայվեն առանձին գրքով:

Պարիզից հեռագրում են, որ ֆրանսիական հանրապետութեան նախագահ Լուրէ, արքեպիսկոպոսին ընդունելու ժամանակ, ասեց. «Բոլոր կրօնների պէտք է համահաւասար յարգանք վայելեն մեզ մօտ: Ապա պատասխանելով տեղական բարերի ողջոյնին, Լուրէ ասեց, թէ միաւորութեան կը լինէր մտածել, թէ հնաբաւոր է XIX-րդ դարի վերջում ոչնչացնել խճի ազատութիւնը եւ հաւասարութեան սկզբունքները, յետագիւրականների փորձերը այդ ուղղութեամբ կատարելու անպատեղ են եւ ոչ մի համակրութիւն չեն գտնի ֆրանսիացիների, մանտանդ հանրապետականների կողմից:

Գերմանական լրագիրները հաղորդում են, որ Թիւրքիայից երեք արտակարգ զեսպանութիւններ են ուղարկված Պարիզ, Բերլին եւ Նապոլ: Սուլթանի յանձնարարութիւնները վերաբերում են գլխաւորապէս Մակեդոնիայում տեղի ունեցող յուզումներին, որոնք, թիւրքաց կառավարչական չըջանալի համոզմունքով, հետեւանք են բոլորապէս եւ աստորիական էմիսարների գործունէութեան:

ՄԵՆԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

27 հոկտեմբերի

ՄՕՍԿՎԱ, Այսօր տօնվեց միահաւատութեան հարեւրամեայ յօբելանը: Միահաւատների տաճարում պատարաբար մատուցեց միաբօցոյիս վաղմբի միահաւատ հոգեւորականութեան հետ միասին: Միաբօցոյիս կարգաւ « Սինօ-հի թուղթը» ուղղած միահաւատներին: ԿԱԶԱՆՆԻԹԻԻԵԻ եւ Կազանի մէջտեղում

չոգենաւային հաղորդակցութիւնը փակվեց: ՊԱՐԻՉ: Բաժանվեց չինական գործերին վերաբերեալ «Դեղին վրիթը», որ բաղկացած է 362 փաստաթղթերի: Գրված մինչեւ հոկտեմբերի 17-ը: Այդ փաստաթղթերը կազմված են այն յայտարարից, որ փոխանակել է Ֆրանսիան միւս պետութիւնների հետ: Դրանք բոլորն էլ յայտնի թղթեր են: Գրքի մէջ գտնվում է նոյնպէս Պիչոնի զեկուցումը զեսպանական պաշարման մասին Պեկինում: Պիչոն հաստատում է, որ զեսպանականները ազատվեցին չորհրդի արտակարգ հանգամանքների, որ անկարելի էր նախատեսել: Պիչոն ասելով, զիստոր յանցաւորներն են պրիւց Տուան, զենեւալ Տուսֆուցեան եւ պետական քարտուղար Կանի: ՇԱՆԳՀԱՅ, Չինական կառավարութիւնը պաշտօնապէս խոստացաւ Եւանցիի հովտի փոխարքաներին, որ Շանգհայի տաօտայի չի արձակվի պաշտօնից:

Պատիւնֆուում տեղի ունեցած կոտորածի յանցաւոր մանդարինները հարացանազարկ են արված:

Չինական լրագիրները հաւատացնում են, որ չինական արքունիքը, երկուդ կրելով դաշնակիցների արշաւանքից դէպի Սինանֆու, չինական գործեր ուղարկեց Չժանտեֆու, որպէս զի նրանք դեմագրութիւն ցոյց տան դաշնակիցներին, երբ նրանք մօտենան:

ԼՕՆԴՕՆ: Բօբերտս հաղորդում է Իօհաննէսբուրգից, թէ զեսպանական Լէզալլէ անսպասելի կերպով հոկտեմբերի 23-ին յարձակվեց բօբերների վրա Բօտալիլի հարաւանդումը եւ կատարեալապէս յաղթեց նրանց: Մենք գրուեցինք Մաքսիմի 6 թիւդաճօթ՝ նրանց բոլոր ռազմամթերքով: Գերի են առնված 100 բօբերներ, 25-ը սպանված են, իսկ 30-ը վիրաւորված: Անգլիացիների կողմից սպանված են երեք օֆիցեր, ի միջի որոյ եւ գնդապետ Լէզալլէ եւ 8 զինուոր. վիրաւորված են 7 օֆիցեր եւ 28 զինուոր: Նախագահ Շուէն եւ զենեւալ Դէվետ, որոնք գտնվում էին կուր դաշտում, շտապով հեռացան:

ԲԼՈՒՄՖՈՆԸՆ: Բօբերտս յարձակումն գործեցին երկու ազարակների վրա, որոնք 12 մղոն հեռու են այստեղից, եւ գրաւեցին նրանց:

ԲԵՐԼԻՆ: Վալդերլէզ զեկուցանում է, որ երկաթուղային գնացքների երթեւեկութիւնը Շանգհայուան—Տանսուկու գծի վրա վերականգնումը մինչեւ Տոնկու սպաւում է զեկտեմբերի կէսին:

Նօրմանի գորաբաժինը հոկտեմբերի 24-ին վերադարձաւ Գալլօնի. նա զինաթափ է արել եւ ցրվել է Գուանսիլի մօտ չինական կանոնաւոր զօրքերի 4 բաւալիօն:

ԼՕՆԴՕՆ: Գիւլֆօր Սօլբերի, պատասխանելով ի պատիւ մինիստրութեան առաջարկված բաժակին, ուրախութիւն է յայտնում հարաւային Աֆրիկայում զօրքերի ունեցած աջողութեան համար եւ ողբում է այն կորուստները, որ պատճառեցին հիւանդութիւններն եւ կուրաները: առանձնապէս նա յիշատակում է պրիւց Ուրախան—Վիկտորի անունը: Նա պաշտպանում է զինուորական մինիստրութիւնը, որ ուղարկել է 300,000 մարդ 6,000 մղոն հեռու տեղեկաւորութիւնը պատրաստ է ուղղել այդ մինիստրութեան օխալները: Պատերազմը բարձրացրեց օտարների աշուժ անգլիական գաղթականութիւններին, նշանակութիւնը: Նա ինչեւ Անգլիայի եւ Ամերիկայի մէջ եղած բարեկամական զգացմունքների մասին եւ գոհութիւն յայտնեց Մակ-Կինթէյի երկրորդ ընտրութեան առիթով: Ուսելով Չինաստանի մասին՝ Սօլբերի չէ կարող յայտնել իր մտքերը ամենայն ազատութեամբ, որովհետեւ Անգլիան պետութիւնների միութեան խմբի մի մասն է: Պետութիւնների այժմեան միութեան ընտրող գծերից մէկը խաղաղութեան պահպանումն է, իսկ միւսը՝ չինական հարցի լուծման յետաձգումը: Սօլբերի կարծում է, որ անգլո-գերմանական համաձայնութիւնը արտայայտում է Անգլիայի հետ միացած պետութիւնների մեծամասնութեան ցանկութիւնը: նա պարունակում է իր մէջ երկու կարեւոր պայման—Չինաստանը անձեռնմխել թողնելու ցանկութիւնը եւ առեւտրի համար դոների բացումը: Սօլբերի շատ միւլթարական է համարում, որ պետութիւնները ընդունում են այս հիմնական սկզբունքները: Այս դէպքում հիւղ չը կայ առանձին երկուդ կրելու չինական հարցի վերաբերմամբ: անհրաժեշտ է միայն հակել Չինաստանի վրա, օգնել նրան վերադառնալու կանոնաւոր բեթիսի եւ բարգաւաճման գրաւելով միւս պետութիւններին: զիմաղրելու համար այն գաղափարին, թէ իրը հանել է ժամանա-

կը վտանգելու Ձինստանի ամբողջութիւնը։ Նա խօսում է ապա Անգլիայի պաշտպանողական միջոցների մասին ևս գտնում է, որ պէտք է պաշտպանել երկիրը արգելքներէ խաղաղութեան և սօցիալական բարեփոխութիւնների դործում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հոկտեմբերի 24-ին, սառնոցի գնալու ժամանակ, վնասվեց ինքնաթիռի մօտ՝ Ամուրի տակից անցկացրած հեռագրաթիւնը, ուստի ևս եւրօպական Ռուսաստանի հաղորդակցութիւնը ինքնաթիռի նետ կտրված մնաց երեք օրվայ ընթացքում։ Սառնոցի սառնոցի պատճառով հեռագրաթիւնը ուղղուն մակարելի է։ Ժամանակաւոր հեռագրական կայարան է բացված գետի ափին ևս հեռագրիւնների հաղորդումը դէպի ինքնաթիռի անխուսափելի կերպով բաւականաչափ չը դանդաղի։

ՀԵԼՍԻՆԿԻՅՈՐՄ։ «Ֆինլանդական լրագրում» գետնով և գետնափնային գնացքով չըջաբերականը, որ առաջիկայ յունվարի 1-ից նահանգապետների բոլոր յարաբերութիւնները գետնափնային գնացքով ևս նրա գիւնատան հետ լինելու են պետական լեզուով։

ՆԻՒԻՅՈՐԿ։ Վալինգտոնի կառավարչական չըջանքներում վնասակարան հերքում են այն լրագրական տեղեկութիւնը, թէ իւր Միացեալ Նահանգների չինական զենայանքը բողոքեց գերմանացիների վարմունքի դէմ Պատերազմում։

ՊԱՐԻԶ։ Այսօր երգչուհիների դատարանում սկսվեց Սալոնի դործը, որ փորձ էր արել սպանելու պարսից Շահին։

ԶԻՐԻԿԻՆԻ։ «Gerdland» երկրորդան ուղեւորվեց դէպի Պորտ-Սալիք և Կրիզէրին ափ կը հանէ Մարսելում։

29 հոկտեմբերի

ՊԱՐԻԶ։ Սալոն դատարանում է տաժաւակիր աշխատանքների ցմահ։

ՎԱՇԻՆԳՏՈՆ։ Միւստարութիւնը վճուց թողնել պահանջները դործը, իսկ մնացեալը դործերը, որոնք դեռ ևս գտնվում են Ձինստանում, յետ կանչել և ուղարկել կրկին Մաշիլա։

ԲԵՐԼԻՆ։ Գլխաւոր հրամանատարը հաղորդում է Պեկինից, որ փորձարկելը ամեն տեղ նուազում է։ Պեկինում և Տեանձինում տիֆը դեռ ևս չարմաղկում է։

ԼՕՆԻՆ։ Բօքսիտ հեռագրում է Իօհաննես-բուրգից։ «Ամիտ Դօրին» գեկուցանում է սաստիկ կռիւ մասին, որ տեղի է ունեցել հոկտեմբերի 24-ին և 25-ին Նրա գորաբաժինը, որ բաղկացած էր 250 հեծեալներից, 6 թիւղանոթներից և 900 հեծեալներից, չուտով ինքնաթիռի գոլըս դառնաց յետո՝ անսպասելի կերպով հանդիպեց բոքսիտի մի գորաբաժնի, որ նեղելով անգլիայիների աջ թեւը, հասաւ Կոմատիլիկը։ Այնուհետ բոքսիտը գրաւեցին դօրեղ դիրք, որից նրանք դուրս մղվեցին մեծ չըջապոյտ շարժմանը։ Հեծեալը օրը բօքսիտները, ստանալով նշանաւոր չափով օդակարան գործեր, իրոք աշխատում էին նորից գրաւել դիրքը, որից նրանք հաղածված էին։ Հոկտեմբերի 24-ին, երկրորդան, պատանց մի դէպք, որ դեռ ևս տեղի չէր ունեցել այս պատերազմի մի ժամանակ, — ինչպէս կարծում է Բօքսիտ։ 200 հեծեալ բօքսիտը յանկարծակի յարձակվեցին անգլիական վերջապահների վրա։ Յարձակումը յետ մղվեց կանադացի զորաւորների կողմից 70 եարդ հեռաւորութեան վրա։ Երկու օրվայ ընթացքում անգլիացիներից սպանվեցին 8 և վիրաւորվեցին 32 հոգի։

ՇԱՆԳՀԱՅ։ Պաշտօնական հաղորդում են, թէ հրատարակված է հրաման պատրաստելու չինական արքունիքի համար պալատը Ձմեռնաբնում, Ձմեռեանանում։

ՕԴԵՍՍԱ։ Նահանգական դատարանը՝ ուսաց ընկերութեան «Екатерина» չոգենաւի և Ռուսաստանի ընկերութեան «Петръ» չոգենաւի հրատանց հետ ընդհարվելու դործը ընկելով, պատապարտեց «Петръ» չոգենաւի նաւապետի օգնական Չոլկոյին պաշտօնից հեռացնելու և չորս ամսվայ բանտարկութեան, զեկավար Յվետին — երկու ամսվայ բանտարկութեան և և կեղեցական ապաշխարութեան։ «Екатерина»-ի նաւապետ Օրլով արդարացրված է։ Քաղաքացիական պահանջներից մէկին, որ 1800 բուրգը էր, բաւարարութիւն է տուած. մնացածները վերջացրած են հաշտութեամբ։

ՆԻՒԻՅՈՐԿ։ Վալինգտոնի ուսացական զենայանաւոր ֆինլանդական գործակալ Բուտովիկի յայտնեց, թէ Ռուսաստանը ներկայումս մտադրութիւն չունի այլ ևս ծախքեր անել զինաւորական նաւերի շինութեան վրա, այս պատճառով այն տեղեկութիւնը, թէ Ռուսական կառավարութիւնը չորս նոր զինուորա-

կան նաւեր է պատուիրել չինեյ ամերիկական նաւարաններում, անհիմն է։

30 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թաղաւոր Կայսրը հոկտեմբերի 26-ին հիւանդացու ինֆլուէնցայով. հիւանդութեան ընթացքը բնական է, առանց որ ևս է բարդութիւնների. ինքնազգացութիւնը բաւարար է, այս պատճառով սպասված բիւլլետենները չեն հրատարակվի։

ՊԵԿԻՆ։ Երեք աստիճանաւորների շահվան պատիժը Պատերազմում ևս նրանց գլուխների յոյց զրկել տեղացիների վրա խորին տպաւորութիւն թողլին։

ՊԵԿԻՆ։ Ձը նայելով զենայանքի յայտարարութեանը՝ թէ կօնֆերենցիաներում թաղաւորում է լիակատար համերաշխութիւն և թէ նրանք բոլոր ըննադատված հարցերի վերաբերմամբ համարեա բոլորովին համաձայն են, կատարեալ հիմք կայ ենթադրելու, որ ըննադատութիւնները չեն հեռացել տարրական հարցերից և թէ վնասների փոխանակ վարձատրութիւններ տալու հարցը դեռ ևս չէ ընկել։ Դեռ պահանջները հրաժարվում են տալ որ ևս է տեղեկութիւն բանակցութիւնների դործի մէջ իրանց ունեցած աղտոթիւնների մասին։ Երեւի յետագայ բանակցութիւնները չինական լիազօրների հետ կը ձգձգվեն շատ երկար ժամանակ։ Զիչ տեղեկութիւններ ունեցող չըջանքներում հերքում են չինական արքունիքի վերադառնալու հարաւորութիւնը, քանի որ օտարերկրեայ դործերը գրաւում են Պեկին։ Լի-Պունց-Չանգ օտարաւ չինական կայսրից մի յայտարար, որի մէջ կայսրը հրաժարվում է տալ իր համաձայնութիւնը Տունֆուսանին մահվան պատժի ենթարկելու մասին. կայսրը ցանկանում է միայն թող տալ Իւսիէնի հրաժարեցումը Շանսիի նահանգապետի պաշտօնից, յայտարարագիրը պաշտօնապէս դեռ ևս չէ յանձնված զենայանքին։

Խմբագիր՝ ԱԼԵԿՍԱՆԴՐ ԲԱՆԻՍԹԱՐ Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԻՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱՅՈՒՂԻ (Ժամերը Պետերբուրգի հաշուով) տարբերութիւնը 58 րոպէ։

№ 5 գնացքը։	№ 3 գնացքը։
Բաղուից դուրս է գալիս ցեր. 3 ժ. 5 ր. 47 ժ. 11 ժ. 15 ր.	Բաղուից դուրս է գալիս ցեր. 3 ժ. 5 ր. 47 ժ. 11 ժ. 15 ր.
Բաղուից է հասնում առ. 8 ժ. 23 ր.	Բաղուից է հասնում առ. 8 ժ. 23 ր.
Բաղուից դուրս է գալիս ց. 9 ժ. 3 ր.	Բաղուից դուրս է գալիս ց. 9 ժ. 3 ր.
Բաղուից է հասնում առ. 9 ժ. 11 ր.	Բաղուից է հասնում առ. 9 ժ. 11 ր.
№ 6 գնացքը։	№ 4 գնացքը։
Բաղուից դուրս է գալիս առ. 8 ժ. 56 ր.	Բաղուից դուրս է գալիս առ. 8 ժ. 56 ր.
Բաղուից է հասնում ցեր. 8 ժ. 42 ր.	Բաղուից է հասնում ցեր. 8 ժ. 42 ր.
Բաղուից դուրս է գալիս ց. 9 ժ. 22 ր.	Բաղուից դուրս է գալիս ց. 9 ժ. 22 ր.
Բաղուից է հասնում ցեր. 1 ժ. 25 ր.	Բաղուից է հասնում ցեր. 1 ժ. 25 ր.
առաջ գնացք	առաջ գնացք
Շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը։	Շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը։
Բիֆլիսից դուրս է գալիս առա. 7 ժ. 56 ր.	Բիֆլիսից դուրս է գալիս առա. 7 ժ. 56 ր.
Բաղուից է հասնում ցեր. 9 ժ. — ր.	Բաղուից է հասնում ցեր. 9 ժ. — ր.
Բաղուից դուրս է գալիս առա. 6 ժ. 50 ր.	Բաղուից դուրս է գալիս առա. 6 ժ. 50 ր.
Բիֆլիսից է հասնում ցեր. 8 ժ. 12 ր.	Բիֆլիսից է հասնում ցեր. 8 ժ. 12 ր.
Բիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս. ցեր. 10 ժ. — ր.	Բիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս. ցեր. 10 ժ. — ր.
Ալեքսանդրօպոլ հասնում է առ. 8 ժ. 27 ր.	Ալեքսանդրօպոլ հասնում է առ. 8 ժ. 27 ր.
Կարս հասնում է ցեր. 12 ժ. 23 ր.	Կարս հասնում է ցեր. 12 ժ. 23 ր.
Կարսից դուրս է գալիս ցեր. 4 ժ. 12 ր.	Կարսից դուրս է գալիս ցեր. 4 ժ. 12 ր.
Ալեքսանդրօպոլ հասնում է ցեր. 7 ժ. 40 ր.	Ալեքսանդրօպոլ հասնում է ցեր. 7 ժ. 40 ր.
Բիֆլիսից հասնում է առ. 6 ժ. 15 ր.	Բիֆլիսից հասնում է առ. 6 ժ. 15 ր.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԻՆԵԱՆԻ

(Կուլիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

ա մ ե ո Ր, բ ա ց ի կ ի ռ ա կ ի օ Ր Ե Ր Ի ց։

Ա Ռ Ա Ս Տ Ե Ր Ի

Բ. Ա. Նաւատարգեան—11—12 ժ. վիրաւորութեան, վնասակարան (սիֆիլիս) և միզապառ. հիւանդ. Լ. Մ. Զիլիովսկի—9—10 ժ. աչքի, ներքին և նեւրալիկի։

Բ. Յ. Պրօստակի—12—1 ժ. ականջի, քթի, կուրդի և կրծքի։

Բ. Բ. Քարաւանսեան—11—12 ժ. կանանց և երեխայից հիւանդ.

Ա. Պ. Կարապետեան—1—1 1/2 ժ. ներքին և երեխայից։

Ե Ր Ե Կ Ո Ր Ե Ր Ը

Բ. Յ. Պրօստակի—5—6 ժ.

Ա. Ն. Շալալովսկի—6—7 ժ. նեւրալիկի (եղեկ տրաւմաթիւն), վնաս. և մօրթու։

Գ. Ա. Քարաւանով—7—8 ժ. ներքին և երեխայից։

Բ. Ա. Նաւատարգեան—7 1/2—8 ժ.

Վ. Ս. 50 կ. չարսիները ձրի համախորհրդի (կօն-սիֆիլիս) և օպիւսիսի համար առանձին։

Օ. Յ. Աւալանիսկի—առան. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ ԲՈՒԿԱՅԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

հաղորդում է ի տեղեկութիւն ընդհանուրի, որ քաղաքային տարրական ուսումնարաններում կան երգի աղաւ դասեր։ Այդ դասերը ստանալ ցանկացողները պէտք է դիմեն քաղաքային վարչութեան։

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 րոպի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.։



ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազոր բուցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

Ձ Ո Ւ Ի Կ Ա Թ Ը

Երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մոնեթը, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գնեք չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 րոպի, փոքրը—1 ր. 50 կ.։ Մախվում են բոլոր պարֆումերական և դեղաւաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինովայ փողոց. ա. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան պարանքների վաճառման ընկերութեան խանութում։ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բազում. նաև Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի և Արխանգելի դեղատներում։ Օտարաքաղաքայինների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։ 4—100

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՀՈՅՍ ՏԵՍԱԻ
ՄԱՅՐԵՆԻ ԽՕՄԲ

ընթերցանութեան ձեռնարկ կրտսեր դասարանների համար, համառօտ բաղադրով։

Կաղնեցի Կ. Կուսկեանց և Լ. Սարգսեանց, ուսուցիչներ Լազարեան ձեռնարանի։

ԳԻՆԸ 70 40ՊԵԿ

Վաճառվում է Թիֆլիսի Կենտրոնական գրա-վաճառանոցում։

1—10

Ատանների և բերանի խոռոչի հիւանդութիւններ

ԲԻԻՇԿ ՕՐ. Ե. ԱԼԻԲԵԳԵԱՆ

Բ Ա Պ Դ Ո Ւ Մ

Հնդուներ և հիւանդներ

Առաւօտեան 9—1 ժ. և երեկոյեան 5—7 ժ.

Բարեաւանակայա փող., № 16, տ. Դադաշեան, չեկի Բարյատնայա ул., № 16, д. Дадашева.

1—10

III իգական գիմնազիայի մուգիկայի ուսուցչուհի

Ս. Ի. ԿԱՐԱՍԻՆՈՎԱ

Զննելով մի քանի ազատ ժամեր, առաջարկում է իր ծառայութիւնը։

Հասցէ՝ Սկրզինսկայա, № 14. Տեսնել կարելի է 9—10 առ. և 8—9 եր.։

1—6

Բ Ժ Ի Շ Կ

ՏԻԳՐԱՆ ԹԱԳԻՍՏԵԱՆ

Հնդուներ և առաւօտեան 11—12 ժ. և երեկոյեան 5—6 ժ.

Մասնագիտութիւնները և երկխոյց

հիւանդութիւններ։

Шелевниковская (Большая Кривая), д. Шаумова, № 18.

17—20

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵԳԱՆՈՑ

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆ